ընտրական ակզբունքով։ Նաւահանգիստը յանձնւում է անգլիացիներին, որպէս զինուորական բազա եւ ածուխի կայան Սեւ ծովի վրայ»։

Դեգեչկորին աւելացնում է, թէ՝ «այս առաջարկներին մեզ պատասխանեցին, թէ սկզբունքով ընդունելի են, բայց որոշ պատասխան մինչեւ այժմս էլ չունինք»։

Այս վաստաթուղթը ինքնին արդէն այնքա՜ն պերճախօս է, որ հազիւ թէ պէտք զգացուի որեւէ բան աւելացնելու։ Երբ գրաւող զինուորական ուժերի ճնշման տակ մարդիկ ստիպուած են այս կամ այն քայլը անել, այդ դեռ կարելի է հասկանալ եւ հանդուրժել՝ նկատելով, թէ պատերազմական վիճակ է։ Բայց յօժար կամքով սեփական գլխաւոր նաւահանգիստը տալ օտար պետութեան, ուրիշ խօսքով, թոյլ տալ, որ Բաթումը փաստօրէն անցնի անգլիացիների ձեռքը — անկա՞խ պետութիւն է սա։ Իրաւունք չունի՞ն բոլշեւիկները հեղնելու մենշեւիկեան անկախութիւնը։ Իրաւունք չունի՞ն Ցխակայաներն ու Օրախելաշվիլիները ասել, որ մենշեւիկեան Վրաստանը աւելի անկախ չէր, քան Խորհրդային Վրաստանը։

Հին, աւանդական քաղաքականութիւն է այս վրացիների համար, դժբախտաբար։ Անգլիացիներից առաջ նոյն ձեւով էլ վարւում էին գերմանացիների հետ, միշտ էլ մոռանալով, որ Բաթումի հարցը զուտ վրացական հարց չէ։ Նա մեծապէս շահագրգռում է եւ Անդրկովկասեան միւս հանրապետութիւններին, մանաւանդ Ազրբէջանին։ Ինչպէ՞ս կարելի է մինակ, գաղտնի կերպով կարգադրել այդ հարցը, առանց ի նկատի ունենալու եւ հարեւանների կարծիքները։

Ցօդուածս երկարեց, մինչդեռ տակաւին հետաքրքրական բաներ շատ կան վրաց գործիչների թղթերի մէջ։ Զափազանց բնորոշ է եւ Ժորտանիայի խօսակցութիւնը զօր. Քորիի հետ 1919 թ. մայիս 13-ին։ Անգլիացիք ռազմամթերք ու թնդանօթներ են հանել Կարսից եւ ուղարկում են Հիւսիս։ Վրացիք բռնել են դընացքը եւ բաց չեն թողնում։ Զօր. Քորին բողոքում է դրա դէմ։ Ժորտանիան յուզուած պատասխանում է.

«Այդ ռազմամթերքը Կարսից է գալիս. օրինակներ են եղել եւ առաջ, որ բրիտանական հրամանատարութիւնը նման դնացքներ է ուղարկել այնտեղից, եւ այն ժամանակ Վրաստանի կառավարութիւնը բաց է թողել, բայց այժմ, երբ Վրաստանը պատերազմի մէջ է զօր. Դենիկինի բանակի հետ, նման երեւոյթը անպայման անթոյլատրելի է»։

Զօր. Քորին յայտնում է, որ ռազմամթերքը ուղարկւում է ոչ թէ Դենիկինին, այլ Անդրկասպեան երկիր՝ բոլշեւիկների դէմ կռուող թուրքմէններին եւ սպառնում է վրաց կառավարութեան քայլի մասին հեռագրել Պոլիս՝ զօր. Միլնին։

Ժորտանիան կակղում է ,յետ է առնում հրամանը եւ խոստանում է ազատ թողնել դընացքը։

«Զօր. Քորին հարցնում է, թէ առաջի՞ն անգամն են պահւում անգլիական վագոնները։

ԺՈՐՏԱՆԻԱ. Այո՛։

ԶՕՐ. ՔՈՐԻ. Եւ վերջի՞ն։

ԺՈՐՏԱՆԻԱ. Կը յուսամ։

ԶՕՐ. ՔՈՐԻ. Ոչ թէ կը յուսամ, այլ՝ անպայման»։

Ու այս վիրաւորանքը կուլ տալուց յետոյ, Ժորտանիան քծնելով յիշեցնում է Քորիին, թէ «զօր. Թոմսընը խոստացել էր տալ վրաց կառավարութեան Կարսում մնացած փամփուշտների մի մասը»։

Ասել է՝ վրացիները խնդրել են անգլիացիներից, որ Կարսի, այսինքն՝ Հայաստանի փամփուշտի մի մասը իրենց տրուի, եւ այդ այն ժամանակ, երբ յօժար կամքով Վրաստանից մի հատիկ ասեղ իսկ չէին թողնում դէպի Հայաստան։

Նոյն խօսակցութեան ժամանակ, զօր. Քորին յայտնում է, որ իր ստացած տեղեկութիւններով Արտահանից հեռացող վրաց զօրքերը լաւ չեն պահում իրենց. «Օրինակներ են եղել, որ զօրքերը հեռանալիս՝ տարել են իրենց հետ բնակիչների տաւարը... Բացի այդ, Բաթումի ընդհանուր-նահանգապետ Քուք-Քոլիսը դէմ է, որ Արտահանում վրաց 50 հոգինոց զօրամաս պահուի։ Այնտեղ գնում են բրիտանական ուժեր, եւ նրանց տեղ հասնելուց յետոյ վրացիները պէտք է հեռանան Արտահանից»։

Ժորտանիան զարմանում է. չէ՞ որ խոս-